Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Հ.15

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական

խորհրդի 22.09.2017թ. նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Բակալավրիատի կրթական ծրագրերի վերանայման հարցը:
2. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների, գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. Անվանական կրթաթոշակների ներկայացման հարցը:
4. Ֆակուլտետի աշխատակիցների ուսումնական ձեռնարկների հրատարակման հարցը:

Գիտական խորհրդի 44 անդամներից ներկա էին 27-ը, այդ թվում 9 դոկտոր, 14 գիտության թեկնածու:

1. **Լսեցին** - Բակալավրիատի կրթական ծրագրերի վերանայման հարցը:

Հարցը ներկայացրեց դեկան Ա.Սահակյանը:

Որոշեցին - Ստեղծել հանձնաժողովներ մաթեմատիկա, մեխանիկա և ակտուարական ու ֆինանսական մաթեմատիկա մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման համար:

2. **Լսեցին** – ա/ Հայ-Ռուսական /Սլավոնական համալսարանի/ ասպիրանտ Հայկ Ասլանյանի համակարգային ծրագրավորման ամբիոն/ ատենախոսության թեմայի և մասնագիտության փոփոխման հարցը:

Որոշեցին – Հաստատել թեկնածուական ատենախոսության թեման՝ «Պարբերական խմբերի էնդոմորֆիզմների մասին», Ա.01.06. – հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ս. Աթաբեկյանին:

բ/ Առկա ուսուցմամբ 2-րդ տարվա ասպիրանտ Ներսես Սրապիոնյանի /Ա 01.01 – մաթեմատիկական անալիզ մասնագիտությամբ/ գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին - Ասպիրանտ Ներսես Սրապիոնյանի գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր Ա. Ա. Սահակյանին:

3. Լսեցին - 2017-18 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:

Որոշեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետևյալ ուսանողներին ներկայացնել անվանական կրթաթոշակի.

1. Ակադեմիկոս Արտաշես Շահինյանի անվ. կրթաթոշակ
   Կարապետյան Սյուզի Հրաչյայի- ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա, բակալավրիատ 4-րդ կուրս
2. Ակադեմիկոս Մխիթար Ջրբաշյանի անվ. կրթաթոշակ
   Մնացականյան Գևորգ Տիգրանի - մաթեմատիկա, բակալավրիատ 4-րդ կուրս
3. Ակադեմիկոս Նագուշ Հարությունյանի անվ. կրթաթոշակ
   Գրիգորյան Արամ Հարությունի - մեխանիկա, մագիստրատուրա 1-ին կուրս

4. Լսեցին - Ֆակուլտետի աշխատակիցներ Վ. Ա. Մելիք-Փարսադանյանի և Է. Է. Վարդումյանի «Քանակական մեթոդներ ֆինանսներում» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

Որոշեցին - Վ. Ա. Մելիք-Փարսադանյանի և Է. Է. Վարդումյանի «Քանակական մեթոդներ ֆինանսներում» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

Խորհրդի նախագահ Ա. Ա. Սահակյան

Գիտքարտուղար Ս. Հ. Ջիլավյան